ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 19-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, *նախարարներ, պատգամավորներ: Ժողովին նախորդեցին ԳԱԱ գիտական բաժանմունքների ժողովները, որտեղ տեղի ունեցան շահագրգիռ քննարկումներ: Բաժանմունքների ժողովներում լսվեցին ուշագրավ և հետաքրքիր գիտական զեկուցումներ: Զեկուցողների թվում էին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:*

Բացելով ընդհանուր ժողովը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը *խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում վախճանված ակադեմիկոսներ Թինա Ասաթիանիի, Հրաչ Բարթիկյանի, Սիմոն Կրկյաշարյանի, Ռաֆայել Հովհաննիսյանի, Մանվել Զուլալյանի հիշատակը:*

Այնուհետև Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը *ժողովին ներկայացրեց Վեհափառ հայրապետի օրհնությունն ու մաղթանքները:*

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը *հանդես եկավ հաշվետու զեկուցումով և ամփոփեց ՀՀ ԳԱԱ 2011 թ. գիտական գործունեության արդյունքները:*

Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության արդյունքները ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթևոսյանը*:*

Զեկուցումներից հետո ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Սահակյանը, *երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ* Գևորգ Վարդանյանը, *Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն* Արմեն Սաղաթելյանը, *բուսաբանության ինստիտուտի տնօրեն* Ժիրայր Վարդանյանը, *Գյումրիի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն* Սևադա Հովհաննիսյանը*:*

Այս տարի մեծ շուքով նշվելու է նշանավոր արևելագետ, հայագետ, պատմաբան, հնագետ, մեծահռչակ հայ գիտնական Հովսեփ Օրբելու ծննդյան 125 տարին: Եվ, երևի թե, այդ միջոցառումների սկիզբը պետք է համարել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի՝ *աշխարհահռչակ գիտնականի կյանքին նվիրված զեկուցումը:*

Ժողովի մասնակիցները հավանության արժանացրին ԳԱԱ նախագահության գործունեությունը: Ժողովի ավարտին ներկաներին սպասում էր հաճելի արարողություն. անցյալ տարի Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ ընտրված հայազգի գիտնականներին հանդիսավորությամբ հանձնվեցին դիպլոմներ: